եւ Խաթունի նստելու ծիաների սարքը պատրաստէր, վաղ առաւօտեան գարին տար, որ հովով ճանապարհ ընկնէինք: Դարձայ իմ սենեակը մութը բաւականին թանձրացել էր: Մարօն ամէն օր այս ժամուն ճրագ էր ներս բերում. այսօր, երեւի, այնքան զբաղոած էր, որ մոռացել էր, թէ ես նստած եմ խաւարի մէջ: Մեծ եղաւ իմ զարմանքը, երբ տեսայ փոխանակ Մարօին յայտնոեցաւ Մարգարիտը ճրագը ձեռին: Մօր փէշից բռնած, ներս մտաւ եւ փոքրիկ Սալբին — Հասօի անդրանիկը — եւ մի այնպիսի վախկոտ երես էր շինել չորս տարեկան երեխան, կարծես երկիւղ ունէր՝ չիցէ թէ մօրը խլեն իր ձեռքից:

Մարգարիտը ձգած ունէր կարմիր քօղը գլխին, որ առջեւից ծածկում էր նրա երեսը մինչեւ գօտին, իսկ ետեւից՝ բոլոր մէջքը: Նա առանց քօղը բարձրացնելու, լուռ գլուխ տոեց եւ դրեց ճրագն իր տեղում: Ինձ երեւաց, որ նա չէր ուզում հեռանալ, որպէս ասում են՝ ոտքը քարշ գցեց, կարծես ուզում էր մի բան ասել ինձ: Նա կանգնեց ինձնացի փոքր-ինչ հեռու դռան մօտ, իսկ Սալբին տնկոեց մօր առջեւը: Մայրը խթեց դստեր կողքը, դուստրն իր փայլուն աչքերը դարձրուց դէպի նա եւ հարցրուց.

— Ի՞նչ աշեմ:

Մայրը թեքոեցաւ, Սալբիի ականջին փսփսաց մի խօսք:

— Աշա՛յ, ախպեր, ախար եշ էլ խեղճ եմ...

Սալբին շփոթոեցաւ, նա մոռացաւ մօր ասած պարբերութեան կէսը: Մայրը կրկին խթեց նրա կողքին եւ փսփսաց այս անգամ փոքր-ինչ լսելի ձայնով.

— Խորա՛ծ, էսպէս չեն ասի:

Թարգմանը կրկնեց նրա խօսքերը.

— Խորա՛ծ, էշպեշ ցեն աշի:

Մայրը բարկանալով անհմուտ թարգմանի տգիտութեան վրայ, այս անգամին աւելի սաստիկ խթեց նրա կողքին: Սալբին օրօրոեցաւ, ուզում էր ընկնել գետին, բայց հազիւ կարողանալով պահել իրան փոքրիկ ոտների վրայ, տհաճութեամբ հարցրուց.

— Բա՛ , ինցպէ՞շ աշեմ:

— Գլուխդ թաղե՛մ, գիժ սատանայ, տե՛ս, էդպէս ասա՛ — ախպեր, բա ես խեղճ չե՞մ, ամէնը գնում են ուխտ, ես մնում եմ տանը:

Սալբին հաղորդեց ինձ.

— Գլուխդ թաղե՛մ, գիզ շատանա...